ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2003

Հայաստանի Հանրապետության պետական պարտքը 2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 664.4 մլրդ դրամ կամ 1,173.9 մլն ԱՄՆ դոլար:

	2001թ.			2002թ.			2003թ.		
	մլրդ դրամ	*մլն ԱՄՆ դոլար*	*ՀՆԱ-ի նկատ-մամբ, %*	*մլրդ դրամ*	*մլն ԱՄՆ դոլար*	*ՀՆԱ-ի նկատ-մամբ, %*	*մլրդ դրամ*	*մլն ԱՄՆ դոլար*	*ՀՆԱ-ի նկատ մամբ, %*
Պետական պարտք	***545.2***	***970.4***	***45.8***	***640.6***	***1095.3***	***46.3***	***664.4***	***1173.9***	***42.0***
այդ թվում՝									
Ներքին պարտք	*36.4*	*64.8*	*3.1*	*40.8*	*69.8*	*3.0*	*43.1*	*76.2*	*2.7*
Արտաքին պարտք	*508.8*	*905.6*	*42.7*	*599.8*	*1025.5*	*43.3*	*621.3*	*1097.7*	*39.3*

Հաշվարկները կատարված են ելնելով համապատասխան ժամանակաշրջանի վերջի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքից:

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Գծապատկեր 1

Ներքին պետական պարտքի դինամիկան 1995-2003 թվականներին



2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը.

- Ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 43,132.3 մլն. դրամ, որից Պետական կարճաժամկետ պարտատոմսեր՝ (այսուհետ՝ ՊԿՊ) 22,300.0 մլն. դրամ, իսկ Միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսեր՝ (ՄԺՊ) 20,832.3 մլն. դրամ:
- Պետական պարտատոմսերի գծով դեֆիցիտի ֆինանսավորումը՝ 2,303.3 մլն. դրամ:
- Միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 13.72%:
- Պետական պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 353 օր (ՊԿՊ-ներ՝182 օր և ՄԺՊ-ներ՝ 537 օր):

Աղյուսակ 1

2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներ

	առ 31.12.2002թ	առ 31.12.2003թ
Ներքին պետական պարտքը (մլն.դրամ) ընդից՝	**40,812.56**	**43,132.30**
կարճաժամկետ պարտատոմսեր (մլն.դրամ)	23,300.00	22,300.00
միջին ժամկետ. պարտատոմսեր (մլն.դրամ)	17,512.56	20,832.30
Ներքին պետական պարտքի ժամկետայնությունը (օր), ընդից՝	**263**	**353**
կարճաժամկետ պարտատոմսերի համար (օր)	169	182
միջին ժամկետ. պարտատոմսերի համար (օր)	410	537

Ներքին պետական պարտքի եկամտաբերությունը (%) ընդից՝	**16.4304**	**13.7163**
կարճաժամկետ պարտատոմսերի համար (%)	14.7908	11.4296
միջին ժամկետ. պարտատոմսերի համար (%)	18.8359	16.1642
Ներքին պետական պարտք /ՀՆԱ (%)	**3.01**	**2.66**

Գծապատկեր 2

2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին պետական պարտքի կառուցվածքը ըստ թողարկման ժամկետայնության



ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2003թ. ընթացքում տեղի է ունեցել 54 թողարկում, որից 41-ը՝ ՊԿՊ-երի, 13-ը՝ ՄԺՊ-երի թողարկումներ են: Թողարկվել է 44.2 մլրդ. դրամ ծավալով պարտատոմս: Պահանջարկը կազմել է 98.4 մլրդ. դրամ, տեղաբաշխման ծավալը՝ 43.3 մլրդ. դրամ: Արդյունքում, պետական պարտատոմսերի թողարկման ծավալի նկատմամբ պահանջարկը գերազանցել է 2.23 անգամ, տեղաբաշխվել է թողարկման ծավալի 98.0%-ը: Պետական պարտատոմսերի թողարկման ծավալի մեջ ՊԿՊ-երը կազմել են 24.6 մլրդ. դրամ (56 %-ը), իսկ ՄԺՊ-երը՝ 19.6 մլրդ. դրամ (44 %-ը): Տարվա ընթացքում կատարված ՊԿՊ-երի մեկ թողարկման միջին ծավալը կազմել է մոտ 600.0 մլն. դրամ, ՄԺՊ-ինը՝ 1,500. մլն. դրամ:

2003թ. հուլիս ամսից սկսած ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը պարբերաբար իրականացրել է պարտատոմսերի հետգնում՝ 3,048.3 մլն. դրամ ընդհանուր ծավալով: Հիմնականում հետ են գնվել միջին ժամկետայնությամբ մասնակի մարումներով պարտատոմսեր, որոնց եկամտաբերությունը զգալիորեն բարձր էր շրջանառող պարտքի միջին կշռված եկամտաբերությունից: Հետգնումների նպատակն էր բարելավել ներքին պետական պարտքի որակը:

2003թ. ընթացքում կատարված տեղաբաշխումների միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 544 օր, տեղաբաշխման եկամտաբերությունը տատանվել է 9.34%-18.47%-ի սահմաններում, իսկ տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 13.44% (տես աղ. 2):

Աղյուսակ 2

2003թ. ընթացքում պետական պարտատոմսերի եկամտաբերության և ժամկետայնության ցուցանիշներն ըստ ամիսների

	Նվազ. եկամտ.(%)	Առավ. եկամտ. (%)	Միջ. կշռվ. եկամտ(%) .	Տեղ. միջ. կշռ. (օր)
Հունվար	14.6000	15.0649	14.9061	325
Փետրվար	11.5300	13.3000	12.7655	312
Մարտ	12.3700	17.1042	15.0328	381
Ապրիլ	13.5000	18.3104	16.0245	334
Մայիս	13.2000	17.4830	15.3692	295
Հունիս	11.0251	16.1297	14.2751	525
Հուլիս	13.7204	15.3771	14.5633	691
Օգոստոս	10.3539	10.9338	10.5978	340
Սեպտեմբեր	13.1011	13.4921	13.3505	680
Հոկտեմբեր	9.8647	10.2419	10.1210	332
Նոյեմբեր	12.4924	13.0204	12.7363	1271
Դեկտեմբեր	9.5833	9.7663	9.6844	315
Ընդամենը	**9.5833**	**18.3104**	**13.4450**	**544**

Աղյուսակ 3

2003թ.-ի ընթացքում ՊՊ-երի հետ կատարված գործառնություններն ըստ եռամսյակների

(մլն. դրամ)

	Թող.	Տեղ.	Հասույթ	Մարում	Սպասարկ.	Դեֆ.ֆին.
I	8,000.0	8,000.0	7,321.7	8,539.7	1,118.0	-1,218.0
II	11,700.0	10,800.0	10,129.3	8,618.0	1,507.1	1,511.3
III	15,500.0	15,500.0	14,398.9	11,195.3	1,580.4	3,203.6
IV	9,000.0	9,000.0	8,417.1	9,610.7	1,381.8	-1,193.6
Ընդամենը	44,200.0	43,300.0	40,267.0	37,963.7	5,587.3	2,303.3

2003թ. ընթացքում ՊՊ-ի հաշվին պետբյուջեի դեֆիցիտն օրենքով նախատեսվածից ավել է ֆինանսավորվել 303.3 մլն. դրամով, իսկ սպասարկման ծախսերը տնտեսվել են 2012.7 մլն դրամով (տես աղ.3):

Գծապատկեր 3

Ներքին պետական պարտքի եկամտաբերության և ժամկետայնության դինամիկան



Վերոհիշյալ գրաֆիկից պարզորոշ երևում է, որ 2003թ-ի ընթացքում ներքին պետական պարտքի կառավարման բնագավառում հաջողվել է լուծել միաժամանակ երկու խնդիր՝ պարտքի ժամկետայնության երկարաձգում և եկամտաբերության իջեցում: Արդյունքում զգալի բարելավվել է ներքին պետական պարտքի որակը, մարումների բաշխվածությունը կազմել է հինգ տարի՝ մինչև 2008թ.: Տարվա ընթացքում նկատելի է միջին ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի շարունակական աճը, որը կարելի է բացատրել նաև տարվա ընթացքում բանկային համակարգում գրեթե միշտ առկա բարձր ավելցուկային իրացվելիությամբ, պարբերաբար իրականացվող հետգնումներով (տես գծ. 4):

Գծապատկեր 4

Ավելցուկային իրացվելիություն և պահանջարկ/առաջարկ կապը



Ինչ վերաբերվում է պետական պարտատոմսերի նկատմամբ ձևավորված պահանջարկին, ապա դրա 88.19 %-ը (86,8 մլրդ. դրամ) կազմում է գործակալների և դիլերների սեփական միջոցների, իսկ 10.89%-ը (10,7 մլրդ. դրամ)՝ իրենց ներդրողների հաշվին: Պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ժամանակ մասնակիցների կողմից ձեռք բերված պարտատոմսերի 65.6%-ը բաժին է ընկնում վեց գործակալներին, 32.4%-ը՝ 13 դիլերներին, 2.0%-ը՝ Գանձապետական պահառուին: Պետական պարտատոմսերի շուկայում ներդրողների կառուցվածքում տարվա վերջի դրությամբ գերակշռում են ՀՀ բանկերը, այդուհանդերձ պետք է արձանագրել, որ ոչ բանկ ներդրողների տեսակարար կշիռը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է (2002թ-ի վերջի դրությամբ այն կազմել էր 14%):

Գծապատկեր 5

Պետական պարտքի ներդրողների կառուցվածքը
2003 թ. դեկտեմբերի 26-ի դրությամբ



ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2003թ.-ի ընթացքում երկրորդային շուկայում.

- կատարվել է 1229 գործարք, ԿԲ կողմից պարտատոմսերով գործարքներ չեն կատարվել
- գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 48,881.6 մլն. դրամ, որի 53%-ը ՊԿՊ, 47%-ը՝ ՄԺՊ,
- գործարքների միջին կշռված եկամտաբերությունը՝ 12.71%, ամենաբարձրը՝ կազմել է 38.70%, ամենացածրը՝ 3.00%,
- միջին կշռված ժամկետայնությունը՝ 543օր,
- միջին օրական ծավալը՝ 194.75 մլն. դրամ,
- գործարքների միջին օրական քանակը՝ 5:

Ըստ ժամկետայնության գործարքներն ունեն հետևյալ կառուցվածքը (տես գծ. 6) .

Գծապատկեր 6

Երկրորդային շուկայում կատարված գործառույթները ըստ ժամկետայնության 2003 թ.



	1-91 օր	92-182օր	183-273 օր	274-364 օր	365 օր և ավել
գործ. ծավալ	8,977,473,000	6,732,140,000	5,807,614,000	6,136,589,000	21,227,792,000
եկամտ. %	9.31	11.73	12.07	11.59	14.95

Կատարված գործարքների մեջ ՄԺՊ-երի տեսակարար կշիռը նախորդ տարվա համեմատ բավականաչափ ավելացել է (տես 2002թ. “Հայաստանի Հանրապետության պետական պարտքի մասին” տարեկան հաշվետվությունը, էջ 7), որը պայմանավորված է հետգնումների պարբերական իրականացմամբ, ինչպես նաև եկամտաբերության շարունակական անկման պայմաններում միջին ժամկետայնության պարտատոմսերի գրավչության աճով:

Գծապատկեր 7

ՊԿՊ-երի և ՄԺՊ-երի տեսակարար կշիռը



Երկրորդային շուկայում 2003թ. ընթացքում կատարված գործարքների հիման վրա ձևավորված եկամտաբերության կորը ունի հետևյալ տեսքը (տես գծ. 8): Գծապատկերից երևում է, որ շուկայում տոկոսադրույքների ձևավորումը ուղղակի կախվածության մեջ է եղել ժամկետայնությունից:

Գծապատկեր 8

2003թ. ընթացքում կատարված գործարքների ժամկետի և եկամտաբերության գծային կախվածությունը



ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՌՈՒ

Գանձապետական պահառուն 2003թ. ընթացքում արձանագրել է հիմնական ցուցանիշների բարելավում նախորդ տարիների նկատմամբ և հաջողությամբ իրականացրել է իր առաքելությունը՝ աջակցել այն անձանց, որոնք ցանկանում են հուսալի և ապահով ներդնել իրենց խնայողությունները:

2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Գանձապետական պահառուի կողմից իրականացված գործառնությունները ունեցել են հետևյալ տեսքը.

- մասնակցել է կազմակերպված բոլոր 41 թողարկումներին,
- ներդրման ծավալը կազմել է 870.918.000 դրամ,
- միջինը մեկ աճուրդի ժամանակ ներդրվել է 21.241.902 դրամ,
- միջինը մեկ աճուրդում մեկ ներդրողի ներդրման ծավալը կազմել է 1.327.619 դրամ,
- միջինը մեկ աճուրդին մասնակցել է 16 ներդրող,
- մարվել է 637.749.000 դրամի պարտատոմս,
- դիլեր բանկեր է փոխանցվել 41.691.000 դրամի պարտատոմս,
- ընդամենը շրջանառության մեջ է եղել 793.990.000 դրամի պարտատոմս,
- բացված դեպո հաշիվների քանակը կազմել է 662, որոնցից 98-ը բացվել են հաշվետու ժամանակահատվածում,
- գործող դեպո հաշիվների քանակը կազմել է 294,
- շրջանառության մեջ եղած պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 173 օր,
- միջինը մեկ ներդրողի կողմից ներդրման ծավալը կազմել է 2.874.317 դրամ,
- միջինը մեկ ներդրողը մասնակցել է 2.2 թողարկման:

Ներդրման ծավալը 2002թ-ի նկատմամբ աճել է 14.43%-ով, իսկ ԳՊ-ով ձեռք բերված և շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը նախորդ տարվա նկատմամբ աճել է 31.78%-ով:

Գծապատկեր 9

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը 2003թ.



Չնայած նրան, որ 2003 թվականի ընթացքում կայացած ԳՊ մասնակցությամբ թողարկումների եկամտաբերությունների միջինը կազմել է 11.92%, որը 2.71 կետով պակաս է

եղել նախորդ տարվա նույն ցուցանիշից, բնակչության շրջանում պետական պարտատոմսերում ներդրում կատարելու ակտիվությունը չի նվազել:

Վերը նշված ցուցանիշների բարելավումը վկայում է քաղաքացիների շրջանում պետության նկատմամբ վստահության վերականգնման և ամրապնդման մասին: Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ 2003թ. ընթացքում Գանձապետական պահառուն մասնակցել է կազմակերպված Պետական կարճաժամկետ պարտատոմսերի բոլոր 41 թողարկումներին:

Աղյուսակ 4

Գանձապետական պահառուի կատարած գործառնությունները (ըստ եռամսյակների)

2003թ.	Տեղաբաշխում	Մարում	Միջին եկամտաբերություն
I եռ.	154.402.000	178.254.000	13.74 %
II եռ.	296.077.000	164.663.000	13.40 %
III եռ.	180.972.000	159.847.000	10.56 %
IV եռ.	239.467.000	134.985.000	9.98 %
Ընդամենը	870.918.000	637.749.000	

2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բացված դեպո հաշիվների թիվը կազմել է 662, որը 98-ով կամ 17.38 %-ով ավելին է եղել նախորդ տարվա նույն ցուցանիշից (տես գծ. 10):

Գծապատկեր 10

Բացված դեպո հաշիվների դինամիկան



Բացված և գործող դեպո հաշիվների քանակների ավելացումը հետևանք է նաև Գանձապետական պահառուի կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման և սահմանված ժամկետներում ներդրողների դրամական միջոցների վերադարձման:

Գծապատկեր 11

Ներդրումները ըստ ժամկետայնության



	27-39 շաբաթ	40-52 շաբաթ	Ընդամենը
Թողարկման ծավալ 10 %	300,000,000	2,160,000,000	2,460,000,000
Տեղաբաշխում	77,123,000	793,795,000	870,918,000
Տեղաբաշխված կշիռ	25.71	36.75	35.40

Եթե 2002թ. ներդրողները գերադասել են ձեռք բերել 27-39 շաբաթ մարման ժամկետ ունեցող պարտատոմսեր, ապա 2003 թ-ի ընթացքում գերադասելի են եղել 40-52 շաբաթ մարման ժամկետ ունեցող պարտատոմսերը, որոնց տեղաբաշխման կշիռը ամենամեծն է եղել և կազմել է 36.75% (տես գծ. 11): Սակայն, ինչպես երևում է գծապատկերից, ներդրողների կողմից ձեռք է բերվել Գանձապետական պահառուի կողմից առաջարկված ծավալի միայն 35.4%-ը: Սա նշանակում է, որ բազմաթիվ նոր ներդրողների համար մեծ հնարավորություն կա Գանձապետական պահառուի միջոցով մուտք գործելու պետական պարտատոմսերի շուկա՝ օգտվելով ընձեռած բացառիկ արտոնություններից:

ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 1097.7 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 39.3%-ը: ՀՀ արտաքին պետական պարտքի կազմում ընդգրկված են.

- ✓ ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով արտաքին պարտավորությունները՝ 883.0 մլն ԱՄՆ դոլար (80.4%),
- ✓ ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները՝ 214.6 մլն ԱՄՆ դոլար (19.6%):

Գծապատկեր 12

ՀՀ արտաքին պետական պարտքի և արտաքին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշի դինամիկան



2002թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ հանրապետության արտաքին պետական պարտքի ծավալը աճել է 7.0%-ով կամ մոտ 72.2 մլն ԱՄՆ դոլարով (տես գծ. 12):

2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը ձևավորող վարկային զամբյուղը բաղկացած էր գործող 51 պայմանագրերից (տես հավելված 1):

2003թ. ընթացքում ՀՀ արտաքին վարկային զամբյուղը համալրվել է մեկ նոր վարկային պայմանագրով.

- **Կառուցվածքային բարեփոխումների հինգերորդ վարկային ծրագիր՝ SAC-5** (վարկատու՝ *Միջազգային Զարգացման Գործակալություն*, վարկառու՝ *ՀՀ կառավարություն*): Վարկային պայմանագրի ընդհանուր գումարը՝ 30.2 մլն SDR:

  Այս վարկը, ինչպես և Միջազգային Զարգացման Գործակալության կողմից մինչ այդ տրամադրված մյուս վարկերը, տրամադրվել է արտոնյալ պայմաններով:

  Վերականգնման վարկերի բանկի (KfW)-ի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված «Բարձր լարման ցանցերի համակարգերի վերանորոգման» ծրագրի ընդհանուր գումարը ավելացվել է ևս 4.7 մլն EURO-ով:

2003թ. վերջի դրությամբ ՀՀ արտաքին պարտավորությունների (առանց երաշխիքների) 87.9%-ը կազմում են բազմակողմանի վարկատուներից՝ միջազգային ֆինանսական կազմակերպություններից, ստացված վարկային միջոցները, որից 68.2%-ը ՀՀ կառավարության կողմից ստանձնած վարկային պարտավորությունների գծով և 19.7%-ը Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ) կողմից ՀՀ կենտրոնական բանկին տրամադրած վարկերի գծով: Իսկ մնացած 12.1%-ը կազմում են ՀՀ կառավարության կողմից երկկողմանի վարկատուներից՝ օտարերկրյա պետություններից, ստացված վարկերը (տես գծ. 13):

Գծապատկեր 13

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքը ըստ վարկատուների (առանց երաշխիքների)



Ինչպես նախորդ տարիներին (1996թ. ի վեր), այնպես էլ 2003թ. ՀՀ վարկատուների կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունի Համաշխարհային Բանկը:

2003թ. ընթացքում ապրանքների առաքումների ճանապարհով Թուրքմենստանի պարտքի վաղաժամկետ մարման և գույք-պարտքի դիմաց բանաձևով ռուսական վարկերի մարման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունների միջև ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրերի շրջանակներում Հայաստանին արտոնյալ պայմաններով տրամադրված վարկերի ստացման արդյունքում էականորեն փոխվել է ոչ միայն երկկողմ վարկատուների կառուցվածքը, այլ նաև երկկողմ վարկատուների տրամադրած վարկերի արտոնյալության աստիճանը:

2003թ. ընթացքում ՀՀ արտաքին պարտավորությունների գծով ստացվել է 120.6 մլն ԱՄՆ դոլար և, միաժամանակ, արտաքին պարտավորությունների սպասարկմանը ուղղվել է 140.8 մլն ԱՄՆ դոլար (տես աղ. 5), որից՝

- տոկոսավճարների գծով 11.8 մլն ԱՄՆ դոլար,

- հիմնական գումարի մարման գծով 129.0 մլն ԱՄՆ դոլար՝ այդ թվում 63 մլն ԱՄՆ դոլար գույք-պարտքի դիմաց բանաձևով ռուսական վարկերի մարում:

Աղյուսակ 5

ՀՀ արտաքին պարտքի սպասարկումը և արտաքին վարկային միջոցների մասհանումը 2003թ. ընթացքում

/ մլն ԱՄՆ դոլար /

Յուցանիշի անվանումը	*Մասհանում*	*Սպասարկում*		
		ընդամենը	*այդ թվում՝*	
			մարում	*տոկոսավճար*
Ընդամենը	**120.6**	**140.8**	**129.0**	**11.8**
այդ թվում՝				
ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով արտաքին պարտավորություններ	92.3	112.9	102.4	10.4
ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների գծով	28.3	27..9	26.6	1.4

Արտաքին պարտքի սպասարկման տեսանկյունից դրական ազդեցություն է ունեցել 2001 թվականից ի վեր Libor-ի (Լոնդոնի միջբանկային աճուրդում ձևավորված միջին տոկոսադրույք) անկումը (տես գծ. 14):

Գծապատկեր 14

Libor դրույքաչափի փոփոխման միտումը վերջին տարիների ընթացքում



Հաշվի առնելով, որ ՀՀ արտաքին վարկային զամբյուղը բաղկացած է տարբեր արժույթներով տրամադրված վարկերից, կարևոր նշանակություն ունի նաև արտաքին պարտքի արժութային կազմի ուսումնասիրությունը, քանի որ վերջիններիս մասնաբաժինների և փոխարժեքների փոփոխությունը իր անմիջական ազդեցություն է թողնում արտաքին պարտքի մակարդակի վրա (յուրաքանչյուր եռամսյակի վերջի համար արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ հաշվարկվում է եռամսյակի վերջին օրվա դրությամբ դոլարի նկատմամբ համապատասխան արժույթների փոխարժեքների հիման վրա):

Գծապատկեր 15

ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքը ըստ տրամադրման արժույթի



Հաշվի առնելով որ 2003թ. ընթացքում ՀՀ արտաքին պարտավորությունների գծով ստացվել է 120.6 մլն ԱՄՆ դոլար և կատարվել է 129.0 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում, 2002թ. վերջի համեմատ ՀՀ արտաքին պարտքը պետք է նվազեր 8.4 մլն ԱՄՆ դոլարով: Սակայն ՀՀ արտաքին պարտքը 2003թ. ընթացքում աճել է 72.2 մլն ԱՄՆ դոլարով, որը պայմանավորված է 2003թ. ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ SDR-ի և EURO-ի փոխարժեքները զգալի աճելով, ինչպես նաև ՀՀ արտաքին պարտքի զամբյուղի մեջ SDR-ով և EURO-ով տրամադրված վարկերի մեծ տեսակարար կշիռով (2003թ. վերջի դրությամբ ՀՀ արտաքին պարտքի 89.3%-ը):

1999 թվականից ի վեր SDR-ի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ հիմնականում անկման միտում ուներ, սակայն 2002թ. հունիսին արձանագրվեց հակառակ միտումը՝ եթե 2002թ. մարտին վերջին 1SDR = 1.247 ԱՄՆ դոլար, 2002թ. դեկտեմբերի վերջին 1SDR = 1.359 ԱՄՆ դոլար, ապա 2003թ. դեկտեմբերի վերջին 1SDR = 1.486 ԱՄՆ դոլար (տես գծ. 16):

Գծապատկեր 16

ԱՄՆ դոլարի նկատմամբ SDR-ի և EURO-ի փոխարժեքների



փոփոխման միտումը վերջին տարիների ընթացքում

2003թ. ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ SDR-ի և EURO-ի կուրսերի բարձրացումը իր ազդեցությունը թողեց ՀՀ արտաքին պարտքի բացարձակ արժեքի վրա, սակայն արտաքին պարտքի սպասարկման տեսանկյունից վերջինս բացասական ազդեցություն է ունեցել միայն տոկոսավճարների առումով, քանի որ SDR-ով և EURO-ով Հայաստանին տրամադրված վարկերի մարում 2003թ. ընթացքում չի կատարվել:

Չնայած ՀՀ արտաքին պետական պարտքի բացարձակ մեծության աճին, որակական առումով շարունակվել են նախորդ տարիներին արձանագրված դրական տեղաշարժերը: Վերջինս արդյունք է ոչ միայն պայմանագրերի համաձայն կատարված ոչ արտոնյալ վարկերի մարումների, այլև արտաքին պարտքի ձևավորման ոլորտում վարվող քաղաքականության՝ մասնավորապես 2003թ. ևս ոչ արտոնյալ պայմաններով նոր վարկային միջոցներ չեն ներգրավվել, ինչպես նաև կատարվել է ոչ արտոնյալ վարկերի վաղաժամկետ մարում:

Արտաքին պարտքի գնահատման կարևորագույն չափանիշներից է հանդիսանում պարտքը ձևավորող վարկերի արտոնյալության աստիճանը: Վարկի արտոնյալությունը կախված է վարկի տրամադրման պայմաններից՝ տոկոսադրույքից, հիմնական գումարի մարման ժամանակացույցից:

ՀՀ արտաքին պարտքը հիմնականում ձևավորված է 25-40 տարով տրամադրված վարկերից, որոնց արտոնյալ ժամանակաշրջանը 7-10 տարի է (այդ ընթացքում հիմնական գումարի մարում չի կատարվում):

Սկսած 1997 թվականից ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքում արձանագրվել է արտոնյալ վարկերի տեսակարար կշռի աճի շարունակական միտում, որի արդյունքում 2003թ. վերջի դրությամբ արտոնյալ վարկերի մասնաբաժինը կազմել է շուրջ 93 % (տես գծ. 17):

Գծապատկեր 17

Արտաքին պարտքի արտոնյալության դինամիկան



Երկրի արտաքին պարտավորվածության մակարդակի գնահատման տեսանկյունից արտաքին պարտքի բացարձակ մեծությանը զուգահեռ կարևորվում է պարտքը սպասարկելու ունակությունը և մակրոտնտեսական մյուս ցուցանիշների հետ փոխկապվածությունը բնութագրող ցուցանիշները:

Նշված ցուցանիշների շարքում կարելի է դիտարկել Զուտ ներկա արժեքի (ԶՆԱ) ցուցանիշը, որը իրենից ներկայացնում է պետական պարտքի սպասարկման գծով բոլոր ապագա վճարումների զեղչված (դիսկոնտավորված) արժեքը: ԶՆԱ-ն պայմանականորեն

կարելի է սահմանել իբրև տվյալ պահին ձևավորված պետական պարտքը ապագայում ժամանակին և պատշաճ կերպով սպասարկելու նպատակով անհրաժեշտ գումար: 2003թ. վերջի դրությամբ այն կազմել է ՀՆԱ-ի 26.1 %-ը (տես աղ. 6):

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են արտաքին պարտքի բեռը բնութագրող որոշ ցուցանիշների գծով առկա սահմանափակումները տարբեր պարտավորվածության մակարդակ ունեցող երկրների համար և Հայաստանի նմանատիպ փաստացի տվյալները:

Աղյուսակ 6

Արտաքին պետական պարտքը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները

ԶՆԱ / ՀՆԱ					
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ					80% և ավել
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ					48%-80%
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ					մինչև 48%
Հայաստանի Հանրապետություն	*1999թ.*	*2000թ.*	*2001թ.*	*2002թ.*	*2003թ.*
	30.0%	28.0%,	28.0%	28.4%	26.1%
ԶՆԱ / Արտահանում*					
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ					220% և ավել
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ					132%-220%
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ					մինչև 132%
Հայաստանի Հանրապետություն	*1999թ.*	*2000թ.*	*2001թ.*	*2002թ.*	*2003թ.*
	144%	119%	108%	96%	81.5%
Պարտքի սպասարկում / Արտահանում					
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ					25.9%
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ					23.45%
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ					7.8%
Հայաստանի Հանրապետություն	*1999թ.*	*2000թ.*	*2001թ.*	*2002թ.*	*2003թ.*
	16%	11%	10%	10%	15.7% *(8.7%)***
Տոկոսավճար / Արտահանում					
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ					11.65%
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ					9.85%
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ					3.6%
Հայաստանի Հանրապետություն	*1999թ.*	*2000թ.*	*2001թ.*	*2002թ.*	*2003թ.*
	5.0%	3.0%	3.5%	2.9%	1.3%
Արտաքին պարտք / Արտահանում					
Առավել ծանր պարտքի բեռ ունեցող երկրներ					387.95%
Միջին պարտքի բեռ ունեցող երկրներ					209.0%
Նվազ պարտքի բեռ ունեցող երկրներ					64.0%
Հայաստանի Հանրապետություն	*1999թ.*	*2000թ.*	*2001թ.*	*2002թ.*	*2003թ.*
	227.3%	192.3%	167.2%	146.5%	122.8%
Արտաքին պարտք / ՀՆԱ					
Սահման					50.0%
Հայաստանի Հանրապետություն	*1999թ.*	*2000թ.*	*2001թ.*	*2002թ.*	*2003թ.*
	47%	45%	42.7%	43.3%	39.3%
Պարտքի սպասարկում / Բյուջեի եկամուտներ					
Միջին ցուցանիշ					22.5%
Հայաստանի Հանրապետություն	*1999թ.*	*2000թ.*	*2001թ.*	*2002թ.*	*2003թ.*
	17%	15.8%	15.8%	17%	27.9% *(15.4%)***

** 2003թ. համար արտահանման ցուցանիշը նախնական է*

*** նույն ցուցանիշը առանց գույք-պարտքի դիմաց բանաձևով ռուսական վարկերի 63 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով մարման*

Ներկայումս արտաքին պարտքի ոլորտում իրականացվող ձևավորված քաղաքականության, ինչպես նաև ՀՆԱ-ի, ապրանքների և ծառայությունների արտահանման, բյուջեի եկամուտների ներկայիս աճի տեմպերի պահպանման պարագայում առաջիկա տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունը արտաքին պարտքի սպասարկման տեսանկյունից լուրջ խնդիրներ չի ունենա: